

բնակարանի փոփոխութիւնն ալ չկրցաւ հիւանդութեանն օգնել: Տեսաւ որ մօտեցած են վերջին օրերը, ինքնայօժար կամօք ընդունեցաւ խոստովանութեան, թողակի եւ վերջին Օծման Ս. Խորհուրդները Մուրատճաեան վարդապետէն, եւ փետրուարին վերջը կտակն ալ պատրաստեց: Ա'երեւայ թէ այս միջոցին Հռոմ ղրկած պիտի ըլլայ Գաղղիոյ եւ Նէապոլսոյ դեսպաններէն եւ ուրիշներէն հետը բերած յանձնարարականները, որոնք այսօր իր թղթերուն մէջ չեն երեւար:

Քանի մ'օր ետքը հիւանդութիւնը մեղմացաւ. սակայն ամիս մ'ետքը նորէն սաստկացաւ, եւ ինքը հոգեւոր պատրաստութիւնները կատարելով՝ մահուան կը սպասէր:

Գարունն հասաւ. Սարգիս ինք զինք լաւ զգաց, ուղեց Հռոմ մեկնիլ եւ հոն մեռնիլ: Նոյն օրերն Յովհ. Սեղբոսեան Մարքիզը վենետիկէն գրեց Սարգսին, որ անպատճառ վենետիկ երթայ եւ հոն քիչ մը հանգիստ ընէ, ինչպէս ուրիշ անգամ ալ գրած էր, այսպէս նաեւ 27 Փետր. 1773ին, միասին 30 ոսկինպաստ ղրկելով: Ըսոր մէջ կը ծանուցանէր նաեւ, որ Սարգսին դրամը Կ.Պոլսէն վիեննայի վրայով վենետիկ բերել կու տայ, ինչպէս որ 26 Յունիս 1773ի նամակով ալ անոր ձեռքն հասցուց հաշուովը, որ էր ոսկի 1651, լիւրէ 13, սօլտի 4:

Սարգիս ուղեց վենետիկ երթալ, սակայն բժիշկները թոյլ չտուին: Ինքն ալ կառքով պտոյտ մ'ընելով՝ համոզուեցաւ որ անկարող է